«Հաստատում եմ՝

ՀՀ——Տավուշի մարզի

Դիտավանի հիմնական դպրոցի

Տնօրեն՝ —— Ա. Հախվերդյան

« 01 » սեպտեմբեր 2023թ

Դասղեկի աշխատանքային պլան

2023-24 ուստարում նախատեսել եմ այնպիսի դաստիարակչական աշխատանքներ, որոնք իրատեսական են, հնարավոր կլինի իրագործել: Աշխատանքի ընթացքում ակնկալում եմ բացահատել աշակերտներին, վեր հանել ուժեղ ու թույլ կողմերը:

- Աշակերտների ադապտացումը դպրոցական կյանքին
- Կատարել սովորողների մանկավարժահոգեբանական վերլուծություն, բացահայտել ԿԱՊԿՈՒ աշակերտներին:
- Ծանոթացնել օրվա ռեժիմին, կարգ ու կանոնի պահպանմանը:
- Պարբերաբար հետևել աշակերտների անձնական հիգիենային, զրուցել հիգիենայի պահպանման մասին:
- Ստեղծել դասարանական անկյուն՝ դասացուցակ, հերթապահության, դրոշ, զինանշան, օրհներգ:
- Հետևողական աշխատանք ետ մնացող աշակերտների հետ
- ՈՒսուցիչ-աշակերտ, դպրոց-ընտանիք սերտ կապի ստեղծում: Նպաստել սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը: Պլանավորել և վարել ծնողական ժողովներ, համակարգված հաղորդակցություն: Ներգրավել ծնողներին դաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում:
- Դաստիարակչական աշխատանքների վերլուծություն: Կազմակերպել արտադասարանական աշխատանքներ՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկություններն ու ուսուցման մատչելիությունը:
- Բացահայտել երեխաների նախասիրություններն ու կարողությունները: Խթանել ստեղծագործական կարողությունները:
- Կարգավորել սովորողների միջանձնային հարաբերությունները, նպաստել առողջ կոլեկտիվի ձևավորմանը, ձևավորել համագործակցային հմտություններ: Վարքի կուլտուրայի մշակում:
- Ինքնադրսևորման հնարավորությունների ամրապնդում:
- Պլանավորել և վարել դասղեկական ժամեր: Նորմատիվային փաստաթղթերի վարում:
- Խաղային տեխնոլոգիաների կիրառում: «Խաղը» որպես մոտիվացիա ուսուցման գործընթացն ավելի հետաքրքիր դարձնելու համար:
- Դասալսումներ: Համագործակցություն դասարանում դասավանդող ուսուցիչների հետ, վեր հանել դժվարությունները և գտնել հաղթահարելու ուղիներ:

Դասվար՝ Լ. Քոչարյան

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1-ին, 2-րդ դասարան

Շաբաթական՝ 1ժամ Տարեկան՝ 30 ժամ

№	Ամիս	Թեմա	№	Ամիս	Թեմա
1	Սեպտեմբեր	Գիտելիքի օր	17	Փետրվար	«Թումանյանական շաբաթ»
2		Եկեք ծանոթանանք Դասարանական անկյան ձևավորում	18		«Ես բարեկիրթ եմ» թեմայով զրույց և քննարկում Կախարդական բառեր
3		Զրույց «Իմ տունը», «Իմ ընտանիքը » թեմայով:	19		Դասասենյակի նախապատրաստում գարնանը
4		Անկախության օր	20		«Դռները բա՛ց եք գարուն է գալիս»:Գարնան առաջին օր
5	Հոկտեմբեր	Ուսուցչի օր. բացիկների պատրաստում	21	Մարտ	«Ինչ նվիրել մայրիկին»: Տեղեկություն տոնի մասին «Մարտի 8»:
6		Տարվա եղանակներ: Աշուն, աշնանային տեսարան	22		Ցերեկույթ նվիրված մայրության տոնին: «Իմ մայրիկը»
7		Ասմունքի ժամ	23	Ապրիլ	«Ում եմ ամենից շատ սիրում» թեմայով զրույց Ապրիլի 7
8	Նոյեմբեր	Զրույց « Ինչ է ընկերությունը» թեմայով	24		Կազմակերպել միջոցառում «Հրաժեշտ Այբբենարանին»
9		Հանելուկեր, շուտասելուկներ	25		Սուրբ Զատիկ
10		Երթևեկության կանոններ 1. Ով է հետիոտնը 2. Մեր փողոցներում	26		Ի՞նչ եմ ուզում դառնալ

11		3. Մենք գնում ենք դպրոց 4. Սա պետք է իմանան բոլորը	27	Մայիս	Ով աշխատի, նա կուտի: Մուլտֆիլմի դիտում
12	Դեկտեմբեր	5. Մեր հավատարիմ բարեկամը՝ լուսացույց 6. Մենք ծանոթանում ենք ճանապարհային նշաններին	28		Շրջակա միջավայր Վայրի և ընտանի կենդանիներ
13		7.Մենք ուղևորներ ենք 8.Սովորում ենք պահպանել երթևեկության կանոնները	29		Հեքիաթին հյուր
14		**Նախապատրաստում ձմռանը:** **Դասասենյակի կահավորում**	30		Դասարանական գրքերի նորոգում և համալրում նոր գրքերով
			31		Ի՞նչ սովորեցինք այս մեկ տարվա ընթացքում:
15	Հունվար	Ամանորյա հրաշք	32		Ամփոփում:Դասարանական էքսկուրսիա:
16		Հայոց բանակի օր Զրույց հայոց բանակի կազմավորման մասին			